

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

«-----» ----- 2022 թվական N -----Ն

**ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**.

1. Սահմանել՝

1) Գիտական աստիճանի համար ամենամսյա դրամական վճարի տրամադրման կարգը՝ համաձայն Հավելվածի.

2) գիտական աստիճանի համար ամենամսյա դրամական վճարի չափը գիտությունների դոկտորին 50 000 դրամ, գիտությունների թեկնածուին՝ 25 000 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և դրա գործողությունը տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

## ԿԱՐԳ

### ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՄՍՅԱ ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ օրենք) գիտական աստիճան ունեցող անձանց կենսաթոշակից բացի ամենամսյա դրամական վճար (այսուհետ՝ դրամական վճար) տրամադրելուն առնչվող հարաբերությունները:

2. Դրամական վճար տրամադրվում է 70 տարին լրացած, Հայաստանի Հանրապետությունում կենսաթոշակի իրավունք, պետական գիտական կազմակերպություններում և (կամ) բուհերում գիտական և գիտատեխնիկական գործունեության առնվազն 30 տարվա ստաժ ու գիտական աստիճան ունեցող անձանց, ովքեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունվարի 10-ի N 2-Ն որոշմանը համապատասխան՝ առնվազն վերջին 10 տարում առնվազն 9 տարի ստացել են գիտական աստիճանի համար հավելավճար, և այլևս ընդգրկված չեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերում:

3. Դրամական վճարը սահմանվում է ցմահ:

4. Դրամական վճարի նշանակման համար յուրաքանչյուր եռամսյակ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեն պետական գիտական կազմակերպություններից և բուհերից ստանում է այն անձանց ցուցակը և անհրաժեշտ տվյալները, ովքեր բավարարում են սույն կարգի 2-րդ կետի պահանջներին, և համապատասխան ցուցակների հիման վրա ձևավորում է տվյալ եռամսյակի համար մեկ ամփոփ ցուցակ և գիտության ոլորտի պետական լիազոր մարմնի միջոցով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության

աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, որը եռամսյակի ամփոփ ցուցակի տվյալներով համալրում է դրամական վճար ստանալու ենթակա անձանց միասնական ցուցակը (այսուհետ՝ միասնական ցուցակ):

5. Դրամական վճարը նշանակում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ իր ստորաբաժանումների միջոցով (այսուհետ՝ համապատասխան ստորաբաժանում)՝ գիտության ոլորտի պետական լիազոր մարմնի կողմից ներկայացված միասնական ցուցակի համաձայն:

6. Դրամական վճարի վճարումն ապահովում և դրամական վճարի գործը վարում (փաստաթղթերը հաշվառում) է ծառայությունը՝ համապատասխան ստորաբաժանումների միջոցով:

7. Դրամական վճարը նշանակվում է ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա՝ դրամական վճարի իրավունք ունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեի մասին տվյալների:

8. Դրամական վճար նշանակելու համար դիմող՝ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձի՝ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները (ներառյալ հաշվառման վայրը և հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը) ճշտում է համապատասխան ստորաբաժանումը՝ ինքնաշխատ եղանակով:

## **II. ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԸ ԵՎ ՆՇԱՆԱԿԵԼԸ**

9. Դրամական վճար նշանակելու համար անձը, գրավոր դիմումը, անձը հաստատող փաստաթուղթը և սույն կարգի 2-րդ կետով սահմանված պահանջները հավաստող անհրաժեշտ փաստաթղթերը, ներկայացնում է ծառայության՝ իր հաշվառման վայրի համապատասխան ստորաբաժանում:

10. Սույն կարգի 9-րդ կետում նշված դեպքում դրամական վճար նշանակելու համար դիմումը, անձը հաստատող փաստաթուղթը և սույն կարգի 2-րդ կետով

սահմանված պահանջները հավաստող անհրաժեշտ փաստաթղթերն ընդունելու ժամանակ համապատասխան ստորաբաժանման մասնագետը՝

1) դիմումում լրացված տվյալները համեմատում է անձը հաստատող փաստաթղթի, ներկայացված մյուս փաստաթղթերի տվյալների, ինչպես նաև միասնական ցուցակի հետ.

2) տեսաներածում է փաստաթղթերի բնօրինակները և էլեկտրոնային լուսապատճենները մուտքագրում կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում (այսուհետ՝ շտեմարան).

3) հաշվառում է անձի դիմումը և տալիս դիմումն ընդունելու վերաբերյալ իր կողմից ստորագրված ստացական, իսկ փաստաթղթերի բնօրինակները վերադարձնում է դիմողին:

11. Ծառայության համապատասխան ստորաբաժանումը, դիմումն ընդունելուց հետո՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը և առկա տվյալները, կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) նշանակել դրամական վճար.

2) մերժել դրամական վճարի տրամադրումը:

12. Դրամական վճարի նշանակելը մերժվում է եթե՝

1) անձը, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության բնակչության վայրի հասցեում.

2) անձը չի հանդիսանում Հայաստանի Հանրապետության քաղաքացի.

3) անձը ներառված չէ միասնական ցուցակում:

13. Հաշվի առնելով, որ դրամական վճար ստացող անձը կենսաթոշակառու է, ապա նրա կենսաթոշակի գործին կարվում են սույն կարգի 9-րդ կետով նախատեսված փաստաթղթերի լուսապատճենները և դրամական վճար նշանակելու հաշվարկ-կարգադրությունը:

14. Դրամական վճարը նշանակվում և վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

### III. ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ

15. Յուրաքանչյուր ամսվա դրամական վճարը վճարվում է դրամով՝ տվյալ ամսվա ընթացքում՝ անկանխիկ կամ կանխիկ եղանակով:

16. Դրամական վճարի վճարման ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում այդ նպատակով նախատեսված միջոցներից:

17. Դրամական վճար ստացող անձն իրավունք ունի դրամական վճարը ստանալու կենսաթոշակների վճարման ծառայություն մատուցող կազմակերպություններից (այսուհետ՝ կազմակերպություն):

18. Անկանխիկ եղանակով դրամական վճար ստանալու համար դիմումում նշվում են բանկի անվանումը և բանկային հաշվի համարը, իսկ դրամական վճարը կանխիկ եղանակով ստանալու համար դիմելու դեպքում՝ կազմակերպության անվանումը:

19. Դրամական վճարը կանխիկ եղանակով վճարվում է անձի հաշվառման վայրում, իսկ նրա գրավոր դիմելու դեպքում՝ վճարող կազմակերպության գրասենյակում:

20. Դրամական վճարը նաև վճարվում է դրամական վճար ստացողի (խնամակալության տակ գտնվող պատվովճար ստացողի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի՝ խնամակալի) տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով դրամական վճար վճարելու մասին գրավոր դիմումն ու լիազորագիրը ներկայացվում են դրամական վճար նշանակող համապատասխան ստորաբաժանում: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով դրամական վճար չի վճարվում:

21. Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձանց դրամական վճարը նշանակում է քրեակատարողական հիմնարկի գտնվելու վայրի վարչական տարածքն սպասարկող համապատասխան ստորաբաժանումը: Քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող անձանց դրամական վճարը վճարվում է անկանխիկ եղանակով, իսկ լիազորագրով վճարելու դեպքում կարող է վճարվել նաև կանխիկ եղանակով:

22. Դրամական վճար ստացող անձին հասանելիք և նրա մահվան պատճառով չստացված դրամական վճարի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին՝ դիմումը և մահվան վկայականը դրամական վճար ստացող անձի մահվանից հետո վեց

ամսվա ընթացքում, դրամական վճար նշանակող և վճարող համապատասխան ստորաբաժանում ներկայացնելու դեպքում: Սահմանված ժամկետում չստացված դրամական վճարի գումարը ենթակա է ժառանգման:

#### **IV. ԴՐԱՄԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ ԵՎ ՎԵՐՍԿՍԵԼԸ**

23. Դրամական վճարի վճարումը դադարեցվում է՝

1) դրամական վճար ստացող անձի մահվան, ինչպես նաև մահացած կամ անհայտ բացակայող ճանաչվելու դեպքում.

2) դրամական վճար ստացող անձի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում:

3) դրամական վճար ստանալու իրավունքը դադարեցնելու մասին հայտարարությունն անձամբ կամ նոտարական կարգով վավերացմամբ այլ անձի կողմից համապատասխան ստորաբաժանում ներկայացվելու դեպքում.

4) դրամական վճարի գործում կեղծ փաստաթղթերի հայտնաբերման դեպքում.

5) սույն կարգի 2-րդ կետի պահանջներին բավարարելու հանգամանքների վերացման պարագայում:

24. Դրամական վճարի վճարումը դադարեցվում է սույն կարգի 23-րդ կետում նշված հանգամանքներից մեկի առաջացման ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

25. Դադարեցված դրամական վճարի վճարումը վերսկսվում է՝ դրամական վճար ստացող անձին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը դատարանի կողմից վերացվելուց հետո՝ դրամական վճար ստացող անձի՝ համապատասխան ստորաբաժանում գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

26. Դրամական վճարից պահումներ կատարելու, ավել վճարված դրամական վճարի գումարը բռնագանձելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: